



0084, Հայաստանի Հանրապետություն,
քաղաք Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060-38-00-01

0084, Z. Andranik st.1, Yerevan, Republic of Armenia
Tel: 060-38-00-01

МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ
И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО “ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ”
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084, Республика Армения, город Ереван, ул.3. Андраника 1
Тел: 060-38-00-01, E-mail: hven@hven.am, www.hven.am

No. 39-1

«02» 04 2021թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

«ԲԱՐՁՐԱՎՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/28» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017
թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի
«ա» և «գ» պարբերությունների և 26-րդ կետի պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով
«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ
հոդվածի 3-րդ կետի «թ» ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝
Ընկերություն) կարիքների համար Ասիական զարգացման բանկի աջակցությամբ
իրականացվող «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» վարկային ծրագրի
մասով ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների ձեռքբերման
նպատակով ստեղծել «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնահատող հանձնաժողով
(այսուհետ՝ Հանձնաժողով)՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Ընկերության գնումների և մատակարարման
բաժնի գլխավոր մասնագետ Դ. Գասպարյանին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Ընկերության
գլխավոր տնօրենի տեղակալին (Դ. Գրիգորյանին):


4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր»
փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի
2021 թվականի ապրիլի 02-ի N 39-չ հրամանի

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/28» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

- Ա. Ասրյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ (ԳՊ/ԳԱՊ))
- Ա. Բարսեղյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ներդրումային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԳԱ)
- Տ. Ներսիսյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)
- Վ. Գարեգինյան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)
- Ա. Պալտայան - «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (ԳՊ/ԲԱ)



ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ